ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1263-Հ/2 «28» հուլիսի 2023 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ԼԵՌՆԱՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ՁԱՐԹՆԻՐ» (6-7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2023 թվականի փետրվարի 24-ի N 09-Ն հրամանով հաստատված կարգի 14-րդ կետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի «Լեռնահովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ներկայացված «Ձարթնիր» (6-7-րդ դասարաններ) խմբակի ծրագիրը երաշխավորել գործածության:

7/28/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Created in Photo-to-PDF One Click Converter. Download here: https://firehawk.ai/phototopdf/

Հաստատում եմ
կդնարկի՝ Հ. Ա. Զաքարյան
12.06.2023թ.

ՀՀ Լոռու մարզի Լեռնահովիտի Ս. Կարապետյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի
2023-2024 ուստարվա «Զարթնիր» ընթերցանության խմբակի
տարեկան ծրագիր-պլան

շաբաթական՝ 1 ժամ՝ 45 րոպե
տարեկան 34 ժամ
1-ին կիսամյակ 15 ժամ
2-րդ կիսամյակ 19 ժամ
6-7-րդ դասարաններ

«Զարթնիր» ընթերցանության ինտերակտիվ խմբակ

Խմբակն իրականացվում է «Zartnir» կրթական ՀԿ-ի մեթոդական աջակցությամբ, որը նաև ներառում է գեղարվեստական գրականության տրամադրում և ժամանակավոր օգտագործում (4 շաբաթ յուրաքանչյուր գրքի համար): Խմբակի իրականացման նպատակն է մարզերի երեխաների համար 21-րդ դարին համապատասխան կրթական հնարավորություններ ստեղծել, այն է՝ «Արթնացնել կարդացող Հայաստանը՝ ներդրում անելով ազգի ապագայի մեջ, զարգացնելով սերունդ որը կունենա իր ազդեցությունը Հայաստանի ներսում և Հայաստանի սահմաններից դուրս[1]»:

Նպատակ և վերջնարդյունք

Նպատակ	Վերջնարդյունք *Խմբակի անդամները կկարողանան*
Ներկայացնել կարդալու, կարդացածը հասկանալու և վերլուծելու կարևորությունը հայրենիքի և անձի	Կարդալ և վերլուծել գեղարվեստական գրականություն, ներկայացնելով կարդալու նպատակները հայրենիքի և

[1]. «Զարթնիր» խմբակների անցկացման մեթոդաբանություն

Created in Photo-to-PDF One Click Converter. Download here: https://firehawk.ai/phototopdf/

զարգացման գործում	անձի զարգացման գործում
Ձևավորել և զարգացնել ընթերցանության հանդեպ հետաքրքրություն նրանց մոտ, ովքեր չեն կարդում, ովքեր ստիպված են կարդում	Գործածել ստացած գիտելիքները մոտիվացված և նպատակաուղղված կարդալու համար
Նպաստել գրքի հետ խնամքով վերաբերվելու մշակույթին	Օգտագործել գիրքը խնամքով, Իրականացնել վնասված գրքերի վերանորոգում:
Արժևորել ընթերցանության դերը հայրենիքի և մարդկային փոխհարաբերությունների զարգացման գործում	Ներկայացնել և գնահատել[2] ընթերցանության դերը հայրենիքի և մարդկային փոխհարաբերությունների զարգացման գործում

Ծրագիր

1. Խմբակի մասնակից աշակերտները ստանում են գիրք և ամեն դասից առաջ կարդում նախապես որոշված էջերը
2. Դասերի հաճախականությունը՝ շաբաթական 1 անգամ
3. Դասի ընթացքը 40-90 րոպե
4. Դասը կազմված է լինելու տարբեր հատվածներից՝
   նախադաս. գրքերի կազմում կամ վերանորոգում սովորողների հետ, գրքերի բաժանում և հանձնարարություններ առաջին դասի համար՝ ընթերցվող հատված, տնային առաջադրանքներ՝ տետրում գրել գրքի հեղինակի անունը և գրքի վերնագիր, դուրս գրել հերոսների անունները, , յուրաքանչյուր ընթերցվող հատվածից անծանոթ բառերը գրել տետրում և գտնել բացատրությունը հոմանիշների բառարանում կամ bararan.online կայքում,

[2] Նպատակների և վերջնարդյունքների չափելի դարձնելու համար օգտվել ենք Բլում-Անդերսոնի աստիճանակարգից՝ Anderson, L. W., & Krathwohl, D. R. (2001). A Taxonomy for Learning, Teaching and Assessing: A Revision of Bloom's Taxonomy of Educational Objectives: Complete Edition. New York: Longman

Created in Photo-to-PDF One Click Converter. Download here: https://firehawk.ai/phototopdf/

յուրաքանչյուր ընթերցվող հատվածից դուր եկած մտքերը և արտահայտությունները տետրում գրել

առաջին դաս. խմբավարի կողմից հեղինակի կյանքի ներկայացում տեսասահիկի միջոցով, աշակերտների կողմից ընթերցված հատվածի ներկայացում, գործնական աշխատանք՝ սիրելի հատվածների պատկերում և զուգահեռ քննարկում ազգային կամ դասական երաժշտության ներքո, հաջորդ դասին համար ընթերցվող հատվածի հանձնարարում

երկրորդ դաս. սովորողների կողմից ընթերցված հատվածի ներկայացում և քննարկում, ինտերակտիվ գործիքի կիրառում՝ «հինգ ինչո՞ւ», հաջորդ դասին համար ընթերցվող հատվածի հանձնարարում

երրորդ դաս. սովորողների կողմից ընթերցված հատվածի ներկայացում և քննարկում, դուրս բերված մտքերի քննարկում, էսսե «Եթե ես լինեի հերոսի փոխարեն», հաջորդ դասին համար ընթերցվող հատվածի հանձնարարում

չորրորդ դաս. գրքի ամբողջական քննարկում-ընդհանրացում, գրքի վերաբերյալ թիմային պաստառի ստեղծում, հայտարարություն գրքերը հավաքելու մասին

հինգերորդ դաս. գրքի վերաբերյալ ֆիլմի դիտում- քննարկում, գրքի և ֆիլմի սյուժետային նմանությունների և տարբերությունների քննարկում: Բոլոր գրքերի հավաքում և ուղարկում

Տարեկան թեմատիկ պլան

Հ/Հ	Բովանդակություն	Նպատակ	Ժամա-քանակ	Ընդհանուր նշումներ
1.	Նախադաս	1.Նպաստել գրքի հետ խնամքով վերաբերվելու	1	Յուրաքանչյուր դասի սկզբին նշվելու է

Created in Photo-to-PDF One Click Converter. Download here: https://firehawk.ai/phototopdf/

		մշակույթին 2. Հանձնարարել հետագա անելիքները (ընթերցվող էջերի քանակ, տնային առաջադրանքներ)		նպատակը, ավարտին քննարկվելու է վերջնարդյունքը
2.	Ռոալդ-Դալ Չառլին և շոկոլադե գործարանը	1.Ներկայացնել հեղինակի մասին հետաքրքիր փաստեր 2. Ներկայացնել և վերլուծել ստեղծագործության բովանդակությունը 3. Շարադրանքով հիմնավորել սեփական տեսակետը 4. Թիմում աշխատելու կարողունակություն ձեռքբերել	6	Յուրաքանչյուր դասի սկզբին նշվելու է նպատակը, ավարտին քննարկվելու է վերջնարդյունքը
3.	Ջեյմս Մեթյու Բարրի «Փիթր Փեն»: Փիթր Փենը Քենսինգթոնի այգիներում	1.Ներկայացնել հեղինակի կյանքից հետաքրքիր դրվագներ 2. Պատմել և մեկնաբանել ստեղծագործությա	6	Յուրաքանչյուր դասի սկզբին նշվելու է նպատակը, ավարտին քննարկվելու է վերջնարդյունքը

Created in Photo-to-PDF One Click Converter. Download here: https://firehawk.ai/phototopdf/

		ն սյուժեն, 3.Առանձնացնել ստեղծագործության առանցքային արժեքները դրվագները 4. Ձևավորել տեսակետը հստակ և դիպուկ ներկայացնելու հմտություն5.Հանդուրժողականություն ցուցաբերել տարբերվող կարծիքների նկատմամբ		
4.	Մայքլ Բոնդ-Փադինքթոն անունով արջուկը	1.Ներկայացնել և արժևորել հեղինակի գործունեությունը 2. Ձևավորել ինքնաճանաչման կարողունակություն թիմային աշխատանքում 3.Կարողանալ համեմատական տանել ֆիլմի և գրքի միջև	5	Յուրաքանչյուր դասի սկզբին նշվելու է նպատակը, ավարտին քննարկվելու է վերջնարդյունքը
5.	Անդուն դը Սենտ Էքզյուպերի	1.Զարգացնել ապրումակցման	5	Յուրաքանչյուր դասի սկզբին

Created in Photo-to-PDF One Click Converter. Download here: https://firehawk.ai/phototopdf/

	«Փոքրիկ իշխան»	կարողությունը 2.Հանդուրժողականություն ցուցաբերել տարբերվող կարծիքների նկատմամբ 3. Շարադրանքում հիմնավորել սեփական տեսակետերը		Նշվելու է նպատակը, ավարտին քննարկվելու է վերջնարդյունքը
6.	Վիլյամ Սարոյան- Մայրիկ, ես սիրում եմ քեզ	1.Ճանաչել և գնահատել հայազգի հեղինակին, պատմել հեղինակի կյանքից կարևոր դրվագներ կապված հայրենիքի հետ[3] 2.Համեմատական տանել հեղինակի կյանքի և ստեղծագործության միջև 3.Զարգացնել համամարդկային արժեքների գնահատումը	6	Յուրաքանչյուր դասի սկզբին նշվելու է նպատակը, ավարտին քննարկվելու է վերջնարդյունքը
7.	Ռոբին Հուդ	1.Գնահատել	5	Յուրաքանչյուր

[3] ՀՊՉ, դրույթ II, կետ 6

Created in Photo-to-PDF One Click Converter. Download here: https://firehawk.ai/phototopdf/

		համամարդկային առանձքային արժեքների կարևորությունը 2. Ձևավորել ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն[4]		դասի սկզբին նշվելու է նպատակը, ավարտին քննարկվելու է վերջնարդյունքը

Օգտագործված գրականության ցանկ

1. «Զարթնիր» խմբակների անցկացման մեթոդաբանություն
2. Հանրակրթական Պետական Չափորոշիչ (ՀՊՉ)
3. Anderson, L. W., & Krathwohl, D. R. (2001). A Taxonomy for Learning, Teaching and Assessing: A Revision of Bloom's Taxonomy of Educational Objectives: Complete Edition. New York: Longman

[4] ՀՊՉ, դրույթ II, կետ 4

Created in Photo-to-PDF One Click Converter. Download here: https://firehawk.ai/phototopdf/